ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 հունվարի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

8
(2674)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 9

Այն, որ իշխանության ներկայացուցիչները եւ անձամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անում են հայտարարություններ, որոնք հակասում են միմյանց եւ սուտ են, այլեւս նորություն չէ: Շատ հաճախ նրանք անում են այնպիսի հայտարարություններ, որպիսիք անելու համար մեղադրում են ուրիշներին: Այսպես, կառավարության 2020 թվականի մարտի 19-ի նիստի ընթացքում Նիկոլ Փաշինյանը անդրադարձել էր ՀՀ պարենային ապահովվածության մակարդակին եւ պետական գաղտնիքներ հայտնել: ««Իհարկե ասվել է, որ մենք այդ առումով խնդիրներ չունենք, եւ հիմա իմ ձեռքի տակ տեղեկանք է, որը վկայում է, որ մենք սննդի բավականին լավ պաշարներ ունենք, օրինակ՝ շաքարավազ՝ 201 օրվա պաշար ունենք երեկ չէ առաջին օրվա դրությամբ, հավի միս՝ 64 օրվա պաշար ունենք, ձեթ՝ 38 օրվա պաշար ունենք, բայց միեւնույն ժամանակ, օրինակ, իմ ձեռքին տեղեկանք է, որ երեկ՝ միայն ամսի 18-ին, 38 բեռնատար սննդամթերք է մուտք գործել Հայաստան, այդ թվում՝ ձեթ՝ 18 տոննա, շաքար՝ 220 տոննա, ցորեն՝ 145 տոննա, հրուշակեղեն՝ 15 տոննա, սիսեռ՝ 20 տոննա, եւ էդպես շարունակ, արեւածաղկի սերմ, դդմի սերմ, սառեցված միս, նույնիսկ՝ կարտոֆիլ: Եվ ուզում եմ ասել, որ լիարժեք ապահովված ենք նաեւ վառելիքով՝ բենզինով եւ դիզելային վառելիքով, եւ ներմուծվում է»: Ապահովվածության մասին այս տվյալների հրապարակումից հետո իշխանական պատգամավորները եւ գործադիր մարմինների ներկայացուցիչները, հղում անելով տեղեկատվության գաղտնի բնույթին, հրաժարվում են խոսել եւ պարզաբանումներ տալ: Օրինակ՝ Ազգային ժողովում 2022թ. մարտի 7-ին՝ պատգամավորական ճեպազրույցների ընթացքում, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը, ցորենի պաշարների վերաբերյալ լրագրողի հարցին ի պատասխան, հայտարարեց, որ դա հրապարակման ոչ ենթակա, գաղտնի տեղեկատվություն է: Ստացվում է, որ Էդուարդ Աղաջանյանը անուղղակիորեն մեղադրում է Նիկոլ Փաշինյանին պետական գաղտնիք բացահայտելու եւ հանցագործության համար: Ջուգահեռ իրականությունում 2021 թվականի մայիսի 3-ի Ազգային ժողովի հատուկ նիստի ընթացքում, որտեղ պետք է վարչապետ ընտրեին, դեռ այն ժամանակ վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանը, այն ժամանակ անկախ պատգամավոր Թագուհի Թովմասյանի հարցին ի պատասխան, որը վերաբերում էր Գեղարքունիքի եւ Սյունիքի մարզերում հայկական դիրքերի կահավորման եւ անվտանգային ապահովման խնդիրներին, ասել էր. «Շատ դեպքերում, երբ մեր հանրային դիսկուրսը լսում եմ, ես հասկանում եմ, որ Ադրբեջանի հետախուզությունը շատ փող ծախսելու անհրաժեշտություն չունի»: Այսինքն՝ նա անկախ պատգամավորին մեղադրում էր պետական գաղտնիք հայտնելու համար, այնինչ հենց վարչապետն էր պետական գաղտնիք բացել: Մյուս կողմից՝ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի կացարանի դեպքը եկավ ապացուցելու, որ բանակում եւ առաջնագծում խնդիրներն իսկապես շատ են:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարությունն առ այս պահը խելամիտ մեկնաբանություն չի տալիս՝ ինչպես է ստացվել, որ դեռեւս 2022-ի դեկտեմբերի 16-ին Գեղարվեստի պետական ակադեմիայում ԿԳՄՍ փոխնախարար Արայիկ Խզմալյանի նախագահությամբ տեղի ունեցած ռեկտորի ընտրության արդյունքները գործադիրն այդպես էլ չի հաստատում, ու 16 կողմ ձայներով միաձայն ռեկտոր վերընտրված Արամ Իսաբեկյանին ռեկտոր չի նշանակում: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթն էր բարձրաձայնել՝ ընդգծելով, որ Խզմալյանի հովանու ներքո բուհում պաշտոնեական կեղծիք է կատարվել: Մեր հրապարակած լուրից հետո նախարարության լրատվական ծառայությունը, հաստատելով, որ ընտրության ժամանակ ինչ-որ մութ բան է կատարվել, «պարզաբանում» անունով տեքստ էր հրապարակել: «Խնդրի կարգավորման նպատակով հաջորդ շաբաթ նախատեսվում է խորհրդի նիստ գումարել»: Հաջորդ շաբաթն այս անցնող շաբաթն է, ու առ այսօր ո՛չ ԿԳՄՍ-ն, ո՛չ Գեղարվեստի ակադեմիան խորհրդի նիստ գումարելու մասին հայտարարություն չեն տարածել: Թեեւ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԿԳՄՍ լրատվական ծառայությունից երեկ վստահեցրին, որ հունվարի 19-ին նիստ, այնուամենայնիվ, եղել է (նման բան նաեւ Գեղարվեստի ակադեմիայից ակնարկեցին), բայց փաստն այն է, որ դա հաստատող որեւէ արձանագրություն, հաղորդագրություն չկա: Ակադեմիայում նիստ չլինելու եւս մեկ փաստարկ է այն, որ հունվարի 18-19-ին ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի նախագահ ու ԿԳՄՍ փոխնախարար Խզմալյանը Թբիլիսիում է եղել՝ մասնակցելու վրաց դերասան Վախթանգ Կիկաբիձեի հոգեհանգստի արարողությանը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում գտնվող զինվորների կացարանի հրդեհից փրկվածներից մեկի՝ իրավապահներին պատմած դրվագներից որոշ մանրամասներ: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ փրկված զինվորներից մեկը, որի անունը նախաքննությանը այս փուլում չվնասելու համար չենք հրապարակում, իրավապահներին հայտնել է, որ լսել է ձայներ եւ այսպիսի հայտարարություններ. «Պաժառ է, հելե՛ք, զարթնե՛ք, պաժառ է»: Այդ գոռգոռոցներից արթնացել է, բացել սենյակի դուռը ու տեսել՝ ողջ միջանցքը ծխի մեջ է, տեսել է երկու հոգու, չի հիշում՝ ովքեր էին, ու դեմքը սրբիչով փակելով՝ գնացել է դեպի պատուհան, դրսից տեսել է՝ տղաները ջարդում են պատուհանը, որի արդյունքում կարողացել են իրեն մի կերպ պատուհանի ճաղավանդակների արանքից հանել դուրս: Հիշեցնենք, որ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում գտնվող կացարանում տեղի ունեցած հրդեհի հետեւանքով կա 15 զոհ, 7 վիրավոր:

Երկու ամսից կլրանա մեկ տարին, բայց կառավարությունը դեռ չի նորոգում դեռեւս նախորդ տարվա մարտին փլուզված կամուրջը: Խոսքը Էջմիածին-Մարգարա ավտոճանապարհի մասին է, որն ավելի քան 10 ամիս է, ինչ անանցանելի է: Նշենք, որ նախորդ տարվա մարտին մի քանի գյուղեր կապող՝ Սեւ ջուր գետի կամրջի վրա մեծ ճաքեր էին առաջացել, եւ այդ հատվածով երթեւեկությունը մինչեւ հիմա անհնար է, քանի որ կամուրջը փլուզման վտանգի առաջ է. մի հատվածը ճաքած է: Այն շրջանցելու նպատակով տեղի բնակիչներն անիվներ են տեղադրել կամրջի վրա ու ժապավենով առանձնացրել երթեւեկելի հատվածից: Ե՞րբ են, ի վերջո, սկսվելու կամրջի նորոգման շինաշխատանքները. այս հարցին պատասխան ստանալու նպատակով «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Արմավիրի մարզպետարան: Մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը չբարեհաճեց պատասխանել մեր հարցերին: Թե ինչով է զբաղված մարզպետը, հայտնի չէ, բայց այն, որ իր ղեկավարած մարզում տասից ավելի ամիս է, ինչ փլուզված կամրջի վրայով են մարդիկ երթեւեկում, կարծես թե իրեն չի հետաքրքրում: ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից մեզ խորհուրդ տվեցին դիմել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ: Պարզվեց, որ հիմնանորոգման աշխատանքների ձեռք բերման մրցույթը 2022թ. հայտարարվել է, սակայն չի կայացել մրցույթին դիմած միակ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անճշտությունների պատճառով: Հիմնադրամից հայտնեցին, որ առաջիկայում կհայտարարվի կամրջի հիմնանորոգման նոր մրցույթ. այն կլինի փետրվարին: Հայտնի չէ, թե ինչու են մինչ այժմ շարունակում պաշտոնավարել անգործության մատնված նախարար Գնել Սանոսյանն ու մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը: Նման դանդաղկոտությամբ եւ բառացիորեն անգործության մատնված՝ ցանկանում են հայ-թուրքական ցամաքային սահմանը այդ հատվածից բացել երրորդ երկրների քաղաքացիների համար:

ՏԵՍԱԿԵՏ

ԱՌԱՋՆԱԳԻԾ ՊԱՀՈՂ ԿՈՐՊՈՒՍԸ ԳԼԽԱՏՎԵՑ

Ռազմական փորձագետ Կարեն Վրթանեսյանը վստահ է՝ իշխանությունը՝ ի դեմս վարչապետ Նիկոլ Փաշինյանի, երեկ՝ կառավարության նիստի ժամանակ, հաղթաթաղ, ոտքի վրա 15 զինվորի մահվան դեպքը բենզինի տարայի հետ կապեցին՝ թեման փակելու, մարդկանց շեղելու համար: Նա վստահ է՝ երաշխիք չկա, որ մոտ ապագայում նման ցավալի դեպքեր էլ տեղի չեն ունենա:

Հիշեցնենք՝ Պաշտպանության նախարարությունը հաղորդել էր, որ հունվարի 19-ի գիշերը հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներա-սակրավորային վաշտի կացարանում:

Հրդեհի հետեւանքով կա 15 զոհ, 7 վիրավոր: Նախնական տեղեկություններով՝ վաշտի կացարանում հրդեհը վառարանից է առաջացել:

-Պարոն Վրթանեսյան, երեկ Գեղարքունիքի մարզում ողբերգական դեպք էր տեղի ունեցել, 15 ժամկետային զինծառայողներ հրդեհի զոհ էին դարձել: Նախ՝ ուզում եմ հասկանալ՝ հնարավո՞ր է այսպես հրատապ որոշել, թե ինչ է տեղի ունեցել, եւ երկրորդը՝ ո՞վ է այս ամենի իրական մեղավորն ու պատասխանատուն:

-Տեսեք, հապշտապ որոշել իսկապես անհնարին էր, եւ Նիկոլ Փաշինյանն ուղղակի արդեն բոլորիս ծանոթ իր գործելաոճով գտավ ինչ-որ մի անձ, ում վրա կարելի է սեւեռել ամբողջ խնդիրը, եւ այդ մի անձը դասակի հրամանատար էր, սպա: Եվ այդ գեղարվեստական նկարագրությունը՝ ուղղված դրան, որ բոլորի ուշադրությունը սեւեռվի դրա վրա: Ինչո՞ւ էր 22 հոգի, դատելով ինֆորմացիայից, լրիվ անհասկանալի շինության մեջ առանց կանոնների ապրում եւ բավական երկար ժամանակ: Այնպես չէ, որ արտառող իրավիճակ էր, եւ այդ տղաներին մի քանի հոգով էին տեղակայել: Այստեղ խոսքն ամիսներով այդտեղ մնալու արդյունք է, եւ ոչինչ չի արվել այդ ընթացքում: Նա այնպես էր խոսում, կարծես թե այդ մասին ոչ մեկ չգիտեր: Այդ խնդիրները համակարգային մակարդակով բարձրթողի է, եւ այդ խնդիրների մասին բազմիցս զգուշացվել է, եւ ասվել է, որ քայլեր չեք անում, բայց պետք է անել, իրենք միանգամից հարձակվում են այդ մարդկանց վրա, գորգոռում են: Նույն բանակում անվտանգության կանոններն աշխատացնելը գինու բաժակով կենաց ասել չէ. պետք է աշխատանք, եւ դա չի արվում: Երեկ նաեւ հայտնի դարձավ, որ ահռելի գումարներ չեն ծախսվել, այսինքն՝ ռազմական բյուջեից հատկացված է եղել ու չի ծախսվել: Ամեն անգամ մեզ հեքիաթներ էին պատմում, թե ինչու չի արվում, եւ երկու տարի շարունակ մարդիկ վրաններում են քնում՝ վառարանով տաքացնելով:

-Ի վերջո, ո՞վ է այս ամենի պատասխանատուն:

-Այս ամենի մեղավորը ՀՀ պաշտպանության նախարարն է եւ այդ նախարարին ամեն կերպ պաշտպանողը: Տեսեք, երեկվանից սկսած՝ ժամերի ընթացքում, որոշեցին ազատել կորպուսի գրեթե ամբողջ հրամանատարներին. կորպուսը գլխատվեց, որն առաջնագիծ էր պաշտպանում: Մեղավորներ նշանակվեցին հանրության ուշադրությունը շեղելու համար, իսկ երբ հերթը հասավ իրական պատասխանատուին, ասվեց՝ եկեք չշտապենք, քննություն է պետք եւ այլն: Ստացվեց՝ իրենց համար թիվ չէր այս 15 զոհը: Իշխանական քարոզչամեքենան նախ բարձրաստիճան սպաներին շտապ հանեց պաշտոններից՝ սահմանագիծը պաշտպանողների գնով: Այնուհետեւ դավադրապաշտական տեսություններ սկսեցին տարածվել, թե միգուցե դիվերսիա էր կամ այլ դեպք: Թեմա գցեցին, թե, իբր, իտալական տնակներ պետք է բերեին եւ այլն: Սրանք հեքիաթներ էին եւ մարդիկ սկսել էին այդ չեղած տնակներից խոսել, որոնք կամ տեղ չեն հասել կամ չեն դրվել: Հիմա էլ տարածեցին, թե պաշտպանության նախկին նախարարի նկատմամբ է գործ հարուցվել: Իրական անունները պատասխանատուների այդպես էլ չի նշվում՝ Նիկոլ Փաշինյան եւ Սուրեն Պապիկյան:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՀԱՄԱԽՄԲՎԱԾՈՒԹՅՈՒՆ

«Արցախի եւ Ադրբեջանի չկարգավորված հարաբերություններում Հայաստանը դիտորդ լինել չի կարող». ArmLur.am-ի զրուցակիցն է Արցախի Ազգային ժողովի նախկին նախագահ Աշոտ Ղուլյանը:

-Մեկ ամսից ավելի է, ինչ Արցախը շրջափակման մեջ է գտնվում, փակ է Լաչինի միջանցքը: Իրավիճակը գնալով բարդանում է, կենսական նշանակության հարցեր են առաջ գալիս: Ստեղծված իրավիճակից, Արցախը շրջափակումից դուրս բերելու համար ի՞նչ լուծումներ եք տեսնում:

- Քանի որ ստեղծված իրավիճակին գնահատական տալու փորձերի պակաս չկա, առաջարկում եմ նույն հարցերին նայենք մեկ այլ դիտանկյունից՝ ինչո՞ւ ենք հայտնվել նման կացության մեջ, եւ ի՞նչ կարելի է անել այդպիսի վիճակներից խուսափելու համար:

Որքան էլ մեծ լինի Արցախում արդեն մեկ ամսից ավել տեւող հումանիտար ճգնաժամը նկարագրելու գայթակղությունը, այնուամենայնիվ, պետք է ի սկզբանե արձանագրենք այն պարզ իրողությունը, որ մեզ առաջադրված մարտահրավերը համակարգային լուծման, պետական մակարդակով մոբիլիզացիայի խնդիր է, եւ այն պահանջում է ներգրավել բոլոր կարող ուժերին՝ անկախ նրանց հանդեպ ունեցած կանխակալ կամ կարծրացած վերաբերմունքից:

Թերեւս այստեղ է, որ մենք բախվում ենք համակարգային շեղման փաստին (չնայած ամեն ինչ արվում է, որ մենք չհանգենք այդ խախտումը կամ շեղումը վերացնելու որոշմանը): Բացատրեմ. Արցախի դեմ սանձազերծված պատերազմը շարունակվում է նաեւ 2020 թ-ի նոյեմբերի 9-ից հետո, բայց ինչքան էլ փաստեր են հավաքվում՝ հօգուտ այն պնդման, որ ժամանակակից պատերազմները հենց այսկերպ են լինում եւ հենց այդ պատճառով են ստացել հիբրիդային անվանումը, միեւնույնն է, մեր կառավարող ընտրախավերի մոտ տիրապետում է այն մտայնությունը, թե դա մեր տարածաշրջանի համար չի ասված:

Շրջափակումը նույն պատերազմական գործողությունն է, այսինքն՝ նույն ուժի կիրառման ամենացայտուն օրինակն է: Եվ եթե հայկական պաշտոնական քաղաքական միտքը դրան հակադրում է իր կողմից հնարած եւ միակողմանի օգտագործվող խաղաղության օրակարգը, ուրեմն նոր սադրանքներն ու կրկնվող շրջափակումները, հոսանքի, գազի եւ համացանցի անջատումները լինելու են մշտական ռեժիմով:

Հենց այս մոտեցումների տարբերությունն է այսօր երեւակվում հայկական երկու հանրապետությունների դիրքորոշումների մեջ, եւ որի պատճառով վերջերս հաճախակի են այդ տարբերություններն արտահայտվում պաշտոնական հայտարարություններում կամ բարձրաստիճան պաշտոնյաների հրապարակային տեսակետներում:

Հայաստանը չի կարող դիտորդ լինել Արցախի եւ Ադրբեջանի միջեւ չկարգավորված հարաբերություններում, մենք չենք կարող հրաժարվել վերջին երեսուն տարիներին Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում մեկ-մեկ հավաքված փաստաթղթերից եւ դրանց հիմքով ձեւավորված հակամարտության լուծման սկզբունքներից:

Մեր շահերից չի բխում մինչեւ հիմա չօգտագործված իրավական փաստաթղթերի (օրինակ՝ Ալմա Աթայի հռչակագրի) շրջանառումը քննարկումների մեջ: Ինքնորոշման իրավունքից կամովին հրաժարումը ի վերջո մեզ զրկելու է հիմնախնդրի կարգավորման գործընթացում միջազգային իրավունքի ընձեռած գործիքակազմից օգտվելու հնարավորությունից: Եթե մենք այսպիսի համատարած պաշտպանական բնագծեր ու շերտեր չձեւավորենք Արցախի շուրջ, մշտապես մեզ փորձելու են պահել օրեցօր խորացող հումանիտար ճգնաժամերից լուծումներ փնտելու վիճակում:

- Արցախում վերջերս քննարկվում էր արտահերթ ընտրություններ անցկացնելու հավանականությունը: Սրանք ի՞նչ խոսակցություններ են, արդյոք այս պահին ընտրությունների մասին խոսելու ժամանա՞կն է:

-Անկեղծ պիտի ասեմ, որ ինձ համար մինչ այս պահն անհասկանալի է մեր որոշ գործընկերների խանդավառությունը՝ արտահերթ ընտրություններ անցկացնելու եւ դրանց ակտիվ մասնակցելու հետ կապված: Մնում է ենթադրել, որ Արցախում վերջին մեկ շաբաթվա ընթացքում նկատված ներքաղաքական զարգացումների հանգուցալուծման համար ոմանց մոտ դիտարկվել է արտահերթ ընտրությունների գաղափարը: Հակառակը պիտի պնդեմ. Արցախում եւ Արցախի շուրջ ձեւավորված իրավիճակը ոչ մի տեղ չի թողնում ներքաղաքական տարաձայնությունների եւ ճշտումների համար:

Իմ խորին համոզմամբ՝ այն իրավիճակը, որում մենք հայտնվել ենք, պահանջում է բոլորից համախմբվածություն, որի ստուգաբանության մեջ ընտրությունները հաստատ առաջին տեղում չեն:

Զրույցը՝ Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻ

ՆՈՐ ՄԵԽԱՆԻԶՄ

«Ժողովուրդ» օրաթերթի՝ հունվարի 21-ին հրապարակված «Քվեախցիկը՝ հակառակ. ՔՊ-ական պատգամավորներն Ընտրական օրենսգրքում ուշագրավ փոփոխություն են առաջարկում» վերտառությամբ հոդվածից հետո Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Հովիկ Աղազարյանը եւ Հակոբ Ասլանյանը նկատողություն են ստացել: Հիշեցնենք, որ քպ-ական պատգամավորներն առաջարկել էին փոփոխություն կատարել Ընտրական օրենսգրքում եւ ամրագրել, որ քվեախցիկը պետք է տեղադրվի այնպես, որ ընտրողը քվեարկության պահին լինի թիկունքով դեպի հանձնաժողովը, այսինքն՝ հանձնաժողովի անդամը կարողանա հետեւել ընտրողի շարժը, քայլերը: Հիմնավորման մեջ պատգամավորները նշել էին, թե ներկայումս գործող կարգավորմամբ, երբ քվեարկողը դեմքով է դեպի հանձնաժողովը, խոչընդոտվում է գաղտնիությունը, եւ ամենասովորական հեռախոսով հնարավորություն կա քվեաթերթիկը լուսանկարելու: ՔՊ-ականները նախագծում չէին գրել, թե, օրինակ, հանձնաժողովի անդամը կամ վստահված անձը որքան հեռավորություն պետք է պահպանի ընտրողից, որպեսզի չնայի, թե ինչպես է քվեարկում: Եվ, ահա, մեր հրապարակումից հետո պատգամավորներին ասվել է շտկումներ կատարել, ավելի վստահելի դարձնել օրենքը, ու, որպես պատշաճ հեռավորության շեմ, առաջարկվել է 5 մետրը: Նկատենք՝ այստեղ էլ հարցը չի փակվում. նախ՝ գրիչներով քվեարկությունը շատ դեպքերում չի գործում, եւ ընտրողները մի քանի քվեաթերթիկից պարզապես ընտրում են իրենց նախընտրելին, դնում ծրարի մեջ, իսկ մյուսները նետում աղբարկղը, այսինքն՝ վերահսկել ցանկացողը 5 մետրից էլ կարող է տեսնել՝ որերորդ ծրարը հանեց ընտրողը: Մյուս կողմից՝ շատ գյուղական վայրերում քվեարկության համար նախատեսված տեղամասերի տարածքն այնքան փոքր է, որ 5 մետր հեռավորությունն անհնար կլինի պահել: Մի խոսքով, քպ-ն նոր կեղծիքների մեխանիզմներ է մշակում:

ԹԵԺ ՔԱՌՕՐՅԱ

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը երեկ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին երեք միջնորդագիր է ներկայացրել ԱԺ նախագահին: Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ՝ բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այսինքն՝ Սեյրան Օհանյանը նախ պետք է զրկվի պատգամավորական անձեռնմխելիությունից, որից հետո նոր միայն նրա նկատմամբ կարող է քրեական հետապնդում իրականացվել: Նույն օրենքի համաձայն՝ պատգամավորը անձեռնմխելիությունից կարող է զրկվել միայն գրանցված եւ քվեարկությանը մասնակցած պատգամավորների մեծամասնության որոշմամբ: Սեյրան Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու հարցը քննարկվելու է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստում, որը մեկնարկելու է փետրվարի 7-ին: Բանն այն է, որ ԱԺ-ն քրեական հետապնդում հարուցելու միջնորդությանն համաձայնություն տվել է: Օհանյանին անձեռնմխելիությունից զրկելու հարցը՝ սպասվող քառօրյայի ընթացքում: Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ: Հավելենք, որ Օհանյանն առայժմ չի կալանավորվի: Կալանքի համար էլ առանձին պետք է դատախազը մտնի ԱԺ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ թեեւ իշխող ֆրակցիան քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու հետ կապված միասնական որոշում դեռ չունի, բայց տեղեկացանք, որ կան պատգամավորներ, որոնք դեմ են այս գործընթացին: Չի բացառվում, սակայն, որ անգամ այս պատգամավորները կողմ քվեարկեն ընդդիմադիր պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալուն, որպեսզի ցույց տան, որ այս հարցում միասնական են:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՈՐ ՎԵՐԵԼԱԿ

Հայաստանի վարչապետի աշխատակազմը նոր վերելակ է գնելու: Այդ մասին պաշտոնական փաստաթուղթը հայտնվել է ArmLur.am-ի ձեռքի տակ, որտեղից պարզ դարձավ, որ վարչապետի աշխատակազմը պայմանագիր է կնքել «ՌաֆԷլԳրիգ» ընկերության հետ հունվարի 18-ին: Նշենք, որ վերելակի գնման հրավերին մասնակցել է 3 ընկերություն, ցածր գին առաջարկել է «ՌաֆԷլԳրիգ» ընկերությունը՝ 12 մլն դրամ, բայց վարչապետի աշխատակազմի համար նախատեսված վերելակը պետության վրա արժեցել է 14 մլն 400 հազար դրամ կամ 35 հազար 550 դոլար. գումարվել է 20 տոկոս ԱԱՀ: Ի դեպ, տեղեկացնենք, որ Երեւանի բազմաբնակարան շենքերում հենց այս ընկերությունն է վերելակներ տեղադրում: Պետական գնումների առյուծի բաժինը կնքվում է հենց այս ընկերության հետ: Իսկ թե երկու օր առաջ ձեռք բերված վերելակը կոնկրետ ում է սպասարկելու, կնքված պայմանագրում նշված չէ: Նշենք, որ դեռեւս նախորդ տարվա ընթացքում ՀՀ վարչապետի, փոխվարչապետի ու աշխատակազմի ղեկավարի ընդունարաններ տանող վերելակներն են նորով փոխարինվել. Ըստ հիմնավորման՝աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի ընդունարան տանող վերելակն իբր ֆիզիկապես մաշված վիճակում է եղել, այն հաճախակի խափանվել է: Նախորդ տարի վերելակ ձեռք բերելու նպատակով պետական միջոցներից ծախսվել է 21 մլն 516 հազար դրամ:

Հ. Գ. Վարչապետի աշխատակազմը 35 հազար դոլարով վերելակ է գնում, իսկ զուգահեռ իրականությունում բանակում առկա ամմիսիբար վիճակն է, որին երեկ զոհ գնաց 15 երիտասարդ:

ԵՐԿՈՒ ՎԵՐԱՆՇԱՆԱԿՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրամանագրով՝հունվարի 19-ին ֆինանսների երկու փոխնախարար վերանշանակվել են իրենց պաշտոններում: ArmLur.am-ի տեղեկություններով՝փոխնախարարներ Ավագ Ավանեսյանն ու Արման Պողոսյանը վերանշանակվել են: Վերոնշյալ փոխնախարարները, նշենք, մինչեւ այս էլ պաշտոնավարում էին Ֆինանսում, սակայն բանն այն է, որ, ըստ «Հանրային ծառայության մասին» օրենքի, նախարարի փոփոխության դեպքում նոր նշանակված նախարարի կաբինետի փոխնախարարները (եթե շարունակում են մնալ նույն պաշտոնին) վարչապետի հրամանով նորից պետք է նշանակվեն: Հիշեցնենք, որ նախորդ տարեվերջին ֆինանսների փոխնախարար Տիգրան Խաչատրյանը ՀՀ փոխվարչապետ էր նշանակվել, իսկ նրան փոխարինելու էր եկել Վահե Հովհաննիսյանը:

ԱՊՕԲԻՆԻ ԳՈՒՅՔ

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նավասարդ (Սամվել) Կճոյանի գույքը արգելանքի տակ է դրվել, եւ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝նրա գույքի ուսումնասիրության գործընթացն իրավապահներին խնդրի առաջ է կագնեցրել: Չի բացառվում, որ գործը հասնի Սահմանադրական դատարան: Բանն այն է, որ Կճոյանը հոգեւորական է, եւ Սահմանադրությունը հոգեւորականի մասով այլ կարգավորումների ունի: Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Կճոյանն անձամբ դատախազություն չի գնացել, նրա ներկայացուցիչն է ներկայացել: Իրավապահները հարց են բարձրացրել՝ հոգեւորականը չունի եկամուտ, բայց ունի մեծ ծավալների գույք. որտեղի՞ց նրան այդ գույքը: Հոգեւորականը բացատրել է, որ դա նա ստացել է որպես հոգեւորական նվիրատվություն, իսկ, ահա, իրավապահները հոգեւորականին բացատրել են, որ եկեղեցին ասում է, որ այդ նվիրատվությունը իրենը չէ, եկեղեցունն է: Հիմա բանը հասել է այնտեղ, որ դատախազությունը սպասում է հոգեւորականի կողմից ներկայացվող փաստաթղթերին, որոնք կհիմնավորեն, որ Կճոյանի ունեցվածքն օրինական է, եւ նվիրատվությունն անձամբ իրեն են արել, այլ ոչ թե եկեղեցուն:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԸ ԿԳԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 1-ին կետի, հունվարի 20-ին ՀՀ ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին է ներկայացրել ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար, ՀՀ պաշտպանության նախկին նախարարի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին երեք միջնորդագիր: Ըստ նույն կետի պահանջի՝ միջնորդագրին կցվել է նաեւ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը. հայտնում են դատախազությունից:

Առաջին քրեական վարույթով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախկին նախարարը, օգտագործելով պաշտոնեական դիրքը, կատարել է առանձնապես խոշոր չափերով վատնում (երկու դրվագ), ինչպես նաեւ անձնական այլ շահագրգռվածությունից եւ խմբային շահերից ելնելով՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ (երկու դրվագ):

Երկրորդ քրեական վարույթով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախկին նախարարը, հանդիսանալով պաշտոնատար անձ, խմբային շահերից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, նաեւ չի կատարել ծառայողական պարտականությունները, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ, ինչպես նաեւ վատնելու եղանակով հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գույք:

Երրորդ քրեական վարույթով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախկին նախարարը վատնելու եղանակով հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գույք:

ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթն այս մասին գրել էր դեռ նախորդ տարի. բացի Օհանյանից, այլ պատգամավորների նկատմամբ եւս կարող են նման միջնորդություններ ներկայացվել:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 1-ին կետի, հունվարի 20-ին ՀՀ ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին է ներկայացրել ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար, ՀՀ պաշտպանության նախկին նախարարի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին երեք միջնորդագիր:

Ըստ նույն կետի պահանջի՝միջնորդագրին կցվել է նաեւ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 1-ին կետի՝ միջնորդագիրը քննարկվում է հերթական նիստերի ժամանակ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Ազգային ժողովի հերթական նստաշրջանը գումարվելու է փետրվարի 7-ին, այսինքն՝ այդ օրը մեկնարկող նստաշրջանի ժամանակ էլ Աննա Վարդապետյանը կգա խորհրդարան:

Օրենքում ասվում է. «1. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ազգային ժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պատգամավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

2. Միջնորդագիրը քննարկվում է Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում հետեւյալ կարգով.

1) մինչեւ քսանական որպե տեւողությամբ ելույթներով հանդես են գալիս գլխավոր դատախազը եւ միջնորդագրում նշված պատգամավորը, որոնց կարող են հարցեր տրվել,

2) մտքերի փոխանակություն,

3) միջնորդագրում նշված պատգամավորին եւ գլխավոր դատախազին եզրափակիչ ելույթի համար հատկացվում է մինչեւ 20 որպե:

3. Եթե միջնորդագրում նշված պատգամավորը հարցի քննարկման սկզբում Ազգային ժողովի նիստից անհարգելի պատճառով բացակայում է, ապա հարցը քննարկվում է առանց նրա մասնակցության:

4. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ:

5. Ազգային ժողովի նախագահը պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումը ստորագրում եւ հրապարակում է անհապաղ»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՍԱՄԲ ԲԱՑԵԼ ԵՆ ԳԱԶԱՏԱՐԸ

Ադրբեջանական կողմը մասամբ բացել է Հայաստանից Արցախ մտնող միակ գազատար խողովակը, սակայն թույլ ճնշման պատճառով գազամատակարարումը Արցախի Հանրապետությունում կվերականգնվի որոշակի սահմանափակումներով. այս մասին հայտնում է Արցախի տեղեկատվական շտաբը:

«Կենսական նշանակության ենթակառուցվածքների անխափան գործունեությունը եւ բնակչության նվազագույն կարիքները ապահովելու նպատակով սահմանափակ ծավալով մատակարավող գազը հասանելի կլինի Ստեփանակերտ քաղաքի բնակելի տների, շրջանային գազալցակայանների, ինչպես նաեւ ռազմավարական նշանակության որոշ օբյեկտների համար: Բնակչությանը հորդորում ենք լինել ուշադիր եւ պահպանել գազից անվտանգ օգտվելու կանոնները»,- ասված է հայտարարությունում:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են վարժական հավաքներին ընդգրկված պահեստազորայինների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները:

Իր խոսքում վարչապետը նշել է. «Ջինված ուժերի մեր բարեփոխումներն ավելի հասցեական դարձնելու համար մենք դեռեւս մի քանի ամիս առաջ նախաձեռնել եւ պատվիրել էինք սոցիոլոգիական հարցում վարժական հավաքներին ընդգրկված պահեստազորայինների շրջանում: Եվ արդեն մոտավորապես 10-15 օր հարցման արդյունքները պատրաստ էր, ու դեռեւս նախօրեին տեղի ունեցած ողբերգական իրադարձություններից առաջ՝ այս օրը, պլանավորում էինք լսել հարցումների արդյունքները, որոնք կներկայացնի հարցումներն իրականացրած ընկերությունը: Որոշեցինք չհետաձգել միջոցառումը, մանավանդ որ այն նախապես պլանավորված էր»:

ԿԿԱՅԱՆԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում հունվարի 23-ին կկայանա հանդիպում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի եւ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի միջեւ: Հանդիպումը տեղի կունենա լրատվամիջոցների համար փակ ռեժիմով:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ՝ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

ՀՀ ֆինչական կոմիտեի Լոռու մարզային ֆինչական վարչությունում նախաձեռնված իրական վարույթի շրջանակներում միջոցներ են ձեռնարկվում լիարժեք պարզելու Լոռու մարզում երկու անձի կողմից առերեւույթ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ սպանության փորձ կատարելու, բռնությամբ նրանց օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու, բռնության սպառնալիքով ծառայողական զենքը հափշտակելու, գույքը վնասելու, ապօրինի կերպով թմրամիջոց իրացնելու եւ շրջանառելու դեպքի հանգամանքները:

Քննությամբ փաստեր են ձեռք բերվել առ այն, որ 2023 թվականի հունվարի 18-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցները օպերատիվ տվյալներ են ստացել, որ Վանաձոր քաղաքի բնակիչներ 24 եւ 22-ամյա եղբայրները, նույն քաղաքի Դարպասի ճալ կոչվող տեղանքում իրացնում են թմրամիջոց:

Օպերատիվ տվյալները ստուգելու նպատակով ոստիկանության աշխատակիցները «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայով մեկնել են վերը նշված վայր, որտեղ «Օպել» մակնիշի ավտոմեքենայում նկատելով եղբայրներին՝ մոտեցել են, ներկայացել եւ հորդորել վերջիններիս իրենց հետ գնալ ոստիկանության բաժին: Եղբայրները, չենթարկվելով ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, քաշքշել, ձեռքերով հարվածել են նրանց, իսկ եղբայրներից մեկը այդ ընթացքում հափշտակել է ոստիկանության աշխատակցի «Մակարով» տեսակի ատրճանակը:

Դրանից հետո 24-ամյա երիտասարդը, կյանքից ապօրինի զրկելու դիտավորությամբ, կրակոցներ է արձակել ոստիկանների ուղղությամբ, սակայն նրանց հաջողվել է խուսանավել, որից հետո երիտասարդը ատրճանակի կոթով ջարդել է հիշյալ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի ապակիները:

Այդ ընթացքում դեպքի վայր են ժամանել ոստիկանության այլ աշխատակիցներ եւս: Վերջիններս 22-ամյա երիտասարդին փորձել են նստեցնել իրենց ծառայողական ավտոմեքենան, սակայն մյուս եղբայրը, վերոհիշյալ «Օպել» մակնիշի ավտոմեքենան վարելով նրանց ուղղությամբ, բախվել է վերջիններիս ծառայողական ավտոմեքենային եւ պահանջել բաց թողնել եղբորը, որից հետո դիմել են փախուստի: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում եղբայրները ձերբակալվել եւ ներկայացվել են վարույթն իրականացնող մարմնին: Ոստիկանության երկու աշխատակիցներ տուժող են ճանաչվել:

Կատարվել է դեպքի վայրի զննություն, որի արդյունքում հայտնաբերվել եւ վերցվել են պարկուճներ, փամփուշտ, օդաճնշիչ ատրճանակ, արնանման հետքեր, թմրանյութի նմանվող նյութով փաթեթներ, տրանսպորտային միջոցներից վերցվել են կրակոցի արգասիքների նմուշներ:

Նշանակվել են դատաբժշկական, դատակենսաբանական, դատաքիմիական, համալիր դատաձգաբանական, դատաքիմիական, դատահետքաբանական, փորձաքննություններ: Հետաքննության մարմնին տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու հանձնարարություն:

Ձեռք բերված փաստերի հիման վրա երկու եղբայրների նկատմամբ դատախազի կողմից հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ 22-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 46-44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի եւ 452-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով, իսկ նրա 24-ամյա եղբորը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագ), 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով:

Քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ԿԿԻՐԱՌԵՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԶԵՆՔ

Ոստիկանությունն առաջարկում է փոփոխություններ եւ լրացումներ կատարել կառավարության որոշումներից մեկում: Նախագծով նախատեսվում է ինկասացիոն կազմակերպությունների աշխատողների կողմից օգտագործվող զենքի տեսակներից հանել «ազդանշանային զենքը» եւ «գազային ատրճանակ եւ ռեւոլվեր» եւ վերջիններիս կողմից օգտագործվող զենքի տեսակների ցանկը լրացնել «մարտական ձեռքի մարտական հրաձգային» զենքով:

Հիմնավորման մեջ նշվում է. «Ինկասացիոն կազմակերպությունների աշխատողների կողմից օգտագործվող զենքի տեսակներից կհանվի ազդանշանային զենքը, քանի որ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում, որպես քաղաքացիական զենքի տեսակ, ազդանշանային զենք այլեւս նախատեսված չէ:

Բացի այդ, նույն օրենքի 31-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ ազդանշանային սարքերը հաշվառման (գրանցման) ենթակա չեն, հետեւաբար ձեռք է բերվում առանց թույլտվության:

Միաժամանակ նախագծով նախատեսվում է ինկասացիոն կազմակերպությունների աշխատողների կողմից օգտագործվող զենքի տեսակների ցանկից հանել գազային ատրճանակը եւ ռեւոլվերը, քանի որ արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված փամփուշտներով ատրճանակի կամ ռեւոլվերի նմանվող սարքերը բավարար չեն ապահովելու հուսալի անվտանգություն ինկասացիոն կազմակերպությունների առջեւ դրված խնդիրների իրականացման համար:

Նախագծով նախատեսվում է որոշման 1-ին կետի «գ» ենթակետը խմբագրել՝ ենթակետով նշված իրավական ակտը ուժը կորցրած ճանաչվելու» ՀՀ ոստիկանության պետի 30.04.2021թ? թիվ 5-Ն հրաման» եւ իրավահաջորդ իրավական ակտի՝ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի «Քաղաքացիական եւ ծառայողական զենքի եւ ռազմամթերքի քրեագիտական պահանջները հաստատելու մասին» թիվ 429-Ն որոշման ընդունմամբ պայմանավորված:

Նախագծով առաջարկվում է որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել, քանի որ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով արդեն իսկ նախատեսվել է ՀՀ ոստիկանության կողմից ինկասացիոն ծառայություններին մարտական զենք տրամադրելու իրավակարգավորումը: Բացի այդ, նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետով արդեն իսկ մարտական՝ ձեռքի մարտական հրաձգային զենքը նախատեսվում է որպես ինկասացիոն կազմակերպությունների աշխատողների կողմից օգտագործվող զենքի տեսակների ցանկում:

ԼՈՒՐԵՐ

ԽՈՇՈՐ ԱՎՏՈՎԹԱՐ

Գեղարքունիքի մարզում երեկ՝ հունվարի 20-ին, խոշոր ավտովթար է տեղի ունեցել. ժամը 10:00-ի սահմաններում Nissan Tida մակնիշի ավտոմեքենան Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհի 66.5 կմ հատվածում դեպի Իջեւան ընթանալիս դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել երկաթե արգելապատնեշներին, ապա՝ գազատար խողովակին, եւ հայտնվել ձորակում: Վթարի հետեւանքով 1 հոգի մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Սեւան» բժշկական կենտրոն:

Ավտոմեքենայում եղել են 3 հոգի, որոնցից 2-ին Սեւանի հիվանդանոցի բժիշկները տեղում առաջին բուժօգնություն են ցուցաբերել, սակայն նրանք հրաժարվել են հիվանդանոց մեկնելուց: Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են վարորդի եւ վիրավորի ինքնությունը:

ՀՐԴԵՀ Է ԲՌՆԿՎԵԼ

Հունվարի 20-ին՝ ժամը 11:46-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Մասիս քաղաքի Երեւանյան փողոցի տներից մեկում: Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է 4-րդ փողոցի տներից մեկի տանիքում: Հրդեհը մեկուսացվել է ժամը 11:56-ին, մարվել՝ 12:17-ին: Այրվել են էլեկտրական մալուխներ եւ տան տանիքի 1 քմ հատվածը:

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Հունվարի 19-ին «Սեւան» ազգային պարկի հատուկ նշանակության ջոկատի կողմից իրականացված վերահսկողության միջոցառումների արդյունքում լճից դուրս են բերվել եւ առգրավվել 95 ապօրինի խեցգետնաորսիչ եւ 41 ձկնորսական ցանց: Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 88-րդ հոդվածի՝ կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի եւ ձկնորսության, ինչպես նաեւ կենդանական աշխարհից օգտվելու մյուս տեսակների որսի իրականացման կանոնները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչեւ հարյուրքառասունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող հրացանների ու որսորդական միջոցների, ինչպես նաեւ հիշյալ խախտումները կատարելու գործիք համարվող մյուս առարկաների եւ կենդանիների բռնագրավմամբ: Որսի կանոնները կոպիտ խախտելը (որսը՝ առանց դրա թույլտվության, կամ արգելված վայրերում կամ արգելված ժամանակ կամ արգելված գործիքներով կամ եղանակներով), ինչպես նաեւ որսի մյուս կանոնները պարբերաբար խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչեւ երկուհարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրյոթանասունապատիկից մինչեւ երկուհարյուրհիսնապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն համարվող հրացանների ու որսորդական միջոցների, ինչպես նաեւ հիշյալ խախտումները կատարելու միջոց համարվող մյուս առարկաների եւ կենդանիների բռնագրավմամբ եւ որսորդության իրավունքի զրկմամբ մինչեւ 3 տարի ժամանակով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 18-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԶՈՀՎԱԾՆԵՐԻՑ ԵՐԿՈՒՍԸ՝ ՏԱՎՈՒՇԻՑ

Հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում գտնվող ինժեներասակրավորային վաշտի կացարանում բտկված հրդեհի հետեւանքով զոհված 15 ժամկետային զինծառայողներից 2-ը Տավուշի մարզի բնակիչ էին: Դիլիջան քաղաքի Գետափնյա 88 շենքի բնակիչ, 2003թ. ծնված Գոռ Մարտիրոսյանը մեկ տարվա զինծառայող էր: Նա սովորել է Դիլիջանի թիվ 2 դպրոցում. Դիլիջանի բնակիչները հայտնում են, որ Գոռը հիանալի, օրինակելի անձնավորություն էր, բարի, համեստ, լավ սովորող, դաստիարակված, հարգված ու սիրված էր: Նա գեղեցիկ նկարներ էր արարում, սովորում էր Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանում, Գոռի հայրը արհեստավոր- շինարար է, մայրն աշխատում է թխվածքի արտադրամասում: Գոռը ընտանիքի միակ որդին էր, Մարտիրոսյանների ընտանիքն աղջիկ ունի: Հրդեհից զոհված Պավլիկ Աբազյանը Իջեւան խոշոր համայնքի սահմանամերձ Աչաջուր գյուղից էր: Նա եւս ընտանիքի միակ տղան էր, Պավլիկի քույրը՝ Մարիանան, 2022թ. դեկտեմբերի 25-ին է ամուսնացել, հարս գնացել Իջեւան քաղաք, այդ ժամանակ Պավլիկն արձակուրդ է գնացել Աչաջուր, մասնակցել քրոջ հարսանիքին: Պավլիկը 19 տարեկան էր, կյոկուշինկայ կարատեի Հայաստանի եռակի չեմպիոն էր, նրա ֆեյսբուքյան էջում բազմաթիվ լուսանկարներ կան իր մարզումներից եւ մրցումներից: Պ. Աբազյանը զորակոչվել էր 2021 թվականի ամռանը, ծառայել էր տարիուկես, 2023-ի ամռանը պետք է զորացրվեր: Պ. Աբազյանի ծնողները գնացել են հրդեհի վայր, սակայն չեն կարողացել ճանաչել իրեն որդու մարմինը. դիակը նույնականացնելու համար նշանակվել է ԴՆԹ փորձաքննություն:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Ստեփան Խոսրովի Օհանյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն զորամասի ժամկետային զինծառայող, պարտավոր լինելով զորամասի հրամանատարի 2022թ. հուլիսի 21-ի թիվ 697 հրամանի համաձայն մեկնել կարգապահական վաշտ եւ կրել սահմանված տույժ, բացահայտ ձեւով հրաժարվել է զինվորական ծառայության առանձին պարտականության կատարումից՝ տույժ կրելու համար կարգապահական վաշտ մեկնելուց: Ս. Օհանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 529 հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել զինվորական հսկողության հանձնելը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՉԵՆ ՀԱՍՑՐԵԼ

ԶՈՐԱՄԱՍԻ ԿՐԱԿԸ ԱՐԱԳ Է ՏԱՐԱԾՎԵԼ

2023թ. հունվարի 19-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում տեղի ունեցած հրդեհի, դրա հետեւանքով նույն վաշտի զինծառայողների մահվան, մի քանի զինծառայողների տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստանալու դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ՁՔԳ վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում կատարվել են ողբերգության հանգամանքները, մասնավորապես՝ հրդեհի առաջացման, զինծառայողների մահվան պատճառները, կացարանում հակահրդեհային կանոնները պահպանված լինելու վիճակը, պատասխանատու պաշտոնատար անձանց շրջանակը պարզելու, նրանց գործողություններին եւ հնարավոր անգործությանն իրավական գնահատական տալուն ուղղված գործողություններ: ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հանձնարարությամբ ՀՀ ՔԿ ՁՔԳ վարչությունում ձեւավորվել է քննչական խումբ:

Հունվարի 19-ի գիշերը՝ դեպքից կարճ ժամանակ անց, քննիչների եւ փորձագետի կողմից սկսվել եւ մինչեւ օրվա առաջին կեսը շարունակվել են դեպքի վայրի զննության աշխատանքները: Դրանց ընթացքում հայտնաբերվել եւ վերցվել են քրեական վարույթի համար նշանակություն ունեցող բազմաթիվ առարկաներ: Հարցաքննվել են մի շարք ականատես վկաներ:

Քրեական վարույթի շրջանակներում այս պահի դրությամբ կատարված քննչական, վարութային գործողություններով, այդ թվում նաեւ՝ հարցաքննված ականատես-վկաների ցուցմունքներով պարզվել են դեպքի վերաբերյալ էական մի շարք հանգամանքներ:

Մասնավորապես, ըստ ստացված նախնական տվյալների՝ ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտը 2021 թվականի մայիսի 13-ից տեղակայվել է Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տներից մեկում: Տունը բաղկացած է եղել նախասրահից եւ երկու սենյակներից, որոնցից մեկը ծառայել է որպես զինանոց, իսկ մյուսը՝ զորանոց, որտեղ տեղադրված են եղել երկհարկանի զինվորական մահճակալներ: Տան ջեռուցումն իրականացվել է փայտի վառարանի միջոցով, որը տեղադրված է եղել նախասրահում:

2023 թվականի հունվարի 18-ին զորամասի ինժեներական ծառայության սպա կապիտանը նշանակվել է ինժեներասակրավորային վաշտի պատասխանատու եւ իր ծառայությունը կատարել է նշված կացարանում: 18.01.2023 թվականին՝ ժամը 18:00-ի սահմաններում, ինժեներասակրավորային վաշտի անձնակազմը, ավարտելով իրեն հանձնարարված աշատանքները, վերադարձել է հիշյալ կացարան եւ ժամը 21:30-ից սկսած՝ պառկել է քնելու: 19.01.2023 թվականին՝ ժամը 00:40-ի սահմաններում, անձնակազմի հիմնական մասը գտնվել է զորանոցում՝ քնած, իսկ 2 ժամկետային զինծառայող վարորդները գնացել են աղբյուրից ջուր բերելու: Օրվա հերթապահը գտնվել է կացարանից քիչ հեռու գտնվող խոհանոցում եւ խոսել է բջջային հեռախոսով: Այդ ընթացքում վաշտի պատասխանատու կապիտանը հերթապահ ժամկետային զինծառայողից հարցրել եւ տեղեկացել է վառարանը վառելու նպատակով ավտոկայանատեղիում ինժեներական աշխատանքներ իրականացնող տեխնիկայի գործարկման սարքավորումը (մեկնարկիչը) լիցքավորելու համար նախատեսված ավտոբենզինի առկայության մասին: Այնուհետեւ 5 լիտր տարողությամբ պլաստամասե տարայում գտնվող ավտոբենզինով փորձել է վառել վառարանը:

Այս հանգամանքը փաստվում է նաեւ վկաների տված ցուցմունքով առ այն, որ այդ հատվածում եղել է բենզինով լցված 5-լիտրանոց 10 տարա, մինչդեռ դեպքի վայրի զննությամբ այնտեղ հայտնաբերվել է 9-ը:

Վառարանն ավտոբենզին լցնելուց հետո բոց է բռնկվել, որի հետեւանքով պատասխանատու կապիտանը, այրվածքներ ստանալով, մեխանիկորեն իր ձեռքի ավտոբենզինով լի տարան նետել է մի կողմ, որն ընկել է կացարանի մեջ, ապա տվյալ օրվա վերակարգում գտնվող մեկ այլ ժամկետային զինծառայողի հետ, որը նույնպես ստացել է այրվածքներ, մի կերպ կարողացել են դուրս գալ կացարանից:

Կացարանի ողջ տարածքով կրակի արագ տարածման հետեւանքով զինծառայողները չեն կարողացել կացարանի մուտքով դուրս գալ, սակայն դրսում գտնվող պարտադիր ժամկետային զինծառայողները կարողացել են 2 ժամկետային զինծառայողի օգնել դուրս գալ զորանոցից:

Դրսում գտնվող ժամկետային զինծառայող վարորդներից մեկը «Ուրալ» մակնիշի ավտոմեքենայով երկու անգամ հարվածել է կացարանի պատին անցք բացելու եւ համածառայակիցներին այնտեղից դուրս բերելու նպատակով, որի արդյունքում պատի որոշակի հատված քանդվել է: Կրակի արագ տարածման պատճառով կացարանում գտնվող մյուս զինծառայողներին չեն կարողացել դուրս բերել, որի հետեւանքով թվով 15 ժամկետային զինծառայողներ մահացել են: Նրանց դիերը դուրս են բերվել հրդեհը մարվելուց հետո:

Նախաձեռնված քրեական վարույթով որոշումներ են կայացվել տուժող ճանաչելու եւ նմուշ ստանալու մասին, նշանակվել են դիակի դատաբժշկական, դատագենետիկական փորձաքննություններ:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվելու են բոլոր միջոցները նաեւ հանրությանը հետաքրքրող հարցերի պատասխանները վարույթի շրջանակում լիարժեք ստանալու համար: Այդ նպատակով մամուլում տեղ գտնող՝ դեպքին առնչվող, իրենց մեջ կոնկրետություն պարունակող հրապարակումները եւս դարձվելու են ստուգման առարկա:

ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ

ԾԽԱԽՈՏ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԸ ԿՎԵՐԱՀՍԿՎԵՆ

Հայաստանի պետական եկամուտների կոմիտեն մտադիր է վերահսկել ծխախոտային արտադրատեսակների շարժը շրջանառության մեջ մտնելուց մինչեւ վաճառք:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանում այս տարվա մարտի 1-ից ծխախոտային արտադրատեսակները նույնականացման միջոցներով կդրոշմավորվեն: Սա թույլ կտա վերահսկել յուրաքանչյուր միավոր ապրանքի շարժը շրջանառության մեջ մտնելուց մինչեւ սպառում, իսկ տեղեկությունը կփոխանցվի ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Ակցիզային դրոշմավորման դեպքում ապրանքի վերաբերյալ տեղեկությունը ամբողջական չի փոխանցվում ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

Նշենք, որ այս մասին որոշման նախագիծը հանրային քննարկման է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեն: Պետական այս կառույցում հույս ունեն, որ կկրճատվի ստվերը, եւ կեղծ ապրանքների շրջանառությանը վերջ կդրվի:

Արդյոք տնտեսվարողները կողմ կլինեն այս որոշմանը՝ ցույց կտա ժամանակը, բայց չի բացառվում, որ այս ամենի արդյունքում լրացուցիչ ծախսեր առաջանան:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 2 ՃՏՊ. 2 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն՝ «ՆԻԿՈ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին

Թիվ ՍՆԴ/2246/04/19 սնանկության գործով ՀՀ Սնանկության դատարանում (դատավոր Բ. Մկրտչյան) 17.01.2023թ. կայացվել է որոշում՝ «ՆԻԿՈ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00171737) նկատմամբ լուծարման վարույթ սկսելու եւ գործունեությունը կասեցնելու մասին:

Սնանկության գործով կառավարիչ՝ Էդուարդ Սերոբյան:

Հեռ՝ +374-77-64-22-00:

ՆՈՐ ՓԱԹԵԹ

Եվրոպական միությունը միակողմանի որոշումներով շարունակում է Ռուսաստանի վրա ճնշումներ գործադրելու փորձեր կատարել: Այս մասին ասվում է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

«Եվրամիության անդամ երկրներն օրերս հերթական՝ 9-րդ պատժամիջոցային փաթեթն են ընդունել՝ ընդդեմ Ռուսաստանի: ԵՄ-ի նման գործելաոճը ոչ լեգիտիմ ենք համարում, որ խախտում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի սահմանած միջազգային իրավունքի նորմերը»,- ասված է ԱԳ նախարարության հայտարարության մեջ:

Ռուսաստանի արտաքին գերատեսչությունը դատապարտել է նաեւ Եվրական խորհրդի գործունեությունը՝ նշելով, որ ԵԽ-ն նույնպես հակառուսական քաղաքականություն է վարում:

«ԵԽ-ի՝ 2022-ի դեկտեմբերի 22-ին ընդունած բանաձեւը, որ «Ռուսաստանը ահաբեկչությունը հովանավորող պետություն» է ճանաչում, վկայումն է այն բանի, որ ԵԽ-ն հակառուսական ագրեսիվ քաղաքականություն է վարում:

Հերթական անգամ ականատեսն ենք լինում Արեւմուտքի քաղաքական հանրության կողմից բանեցվող երկակի ստանդարտներին: Նույն այդ հանրությունը, ի դեպ, 2014-ին աչք փակեց Կիեւի ուժայինների կողմից Դոնբասի խաղաղ բնակչությանը սպանելու փաստի վրա»,- գրում է ՌԴ ԱԳՆ լրատվական ծառայությունը:

Ի պատասխան Արեւմուտքի կողմից գործադրվող պատժամիջոցների հերթական փաթեթի՝ Ռուսաստանն էլ իր հերթին «սեւ ցուցակ» է կազմել Եվրոպական երկրների մի շարք ներկայացուցիչների նկատմամբ: Խոսքը, մասնավորապես, Ուկրաինայի զինված ուժերին վերապատրաստող ԵՄ երկրների իրավապահ մարմինների ղեկավարության, Ուկրաինային ռազմական օգնություն տրամադրող ԵՄ երկրների կառավարության ու առեւտրային կառույցների ներկայացուցիչների, ինչպես նաեւ ԵՄ երկրների քաղաքացիների մասին է, որ համակարգված ու հրապարակային հակառուսական հայտարարություններով են հանդես գալիս:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ

700-ԻՑ ԱՎԵԼԻ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐ՝ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

Հունվարի 19-ին Դիլիջանի համայնքապետարանում տեղի է ունեցել «Դիլիջանում խոցելի խմբերին աջակցելու համար սոցիալական ձեռնարկատիրության եւ մասնագիտական ուսուցման կենտրոնի ստեղծում» ծրագրի փակման արարողությունը:

Արարողությանը մասնակցել են Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Ֆուկուշիմա Մասանորին, Հայաստանի համայնքների միության նախագահ Էմին Երիցյանը, Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը եւ գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայաստանի համայնքների միության նախագահ Էմին Երիցյանը, շնորհակալություն հայտնելով Ճապոնիայի կառավարությանը այս կարեւոր եւ օգտակար ծրագրին աջակցության համար, նշել է, որ Դիլիջան քաղաքն ընտրվել է՝ հաշվի առնելով նաեւ նրա աշխարհագրական դիրքը՝ լինելով Լոռու, Տավուշի եւ Գեղարքունիքի մարզերի աշխարհագրական կենտրոնում, խաչմերուկում: Նա իր խոսքում հայտնել է. «Ծրագրի հիմնական նպատակը սոցիալական ձեռնարկատիրության եւ մասնագիտական ուսուցման մոդելային կենտրոնի ստեղծումն է հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաեւ այլ խոցելի խմբերի ներկայացուցիչներին ոլորտային գիտելիքներ փոխանցելու եւ նրանց զբաղվածությանն օժանդակելու նպատակով»:

Պարոն դեսպանն իր հայերեն ելույթում ընդգծել է, որ այս ծրագիրը համապատասխանում է Տավուշի մարզի ռազմավարական եւ տնտեսական զարգացման ծրագրին՝ խթանելով տեղական արտադրությունն ու զբոսաշրջությունը եւ ընդգկելով այս ոլորտներում խոցելի մարդկանց: Նա նաեւ փաստել է: «Ճապոնիայի կառավարության հանձնառության համապատասխան՝ անհատների պաշտպանությունը կարեւոր է պետությունների եւ հասարակությունների կառուցմանը նպաստելու համար: Հույս ունենք, որ այս լուծումը նպաստելու է խոցելի խմբերի տնտեսական անկախությանը եւ նրանց կյանքի որակի բարելավմանը»:

Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով Ճապոնիայի կառավարությանը, տեղեկացրել է, որ, ըստ վիճակագրական տվյալների, Դիլիջանում հաշվառված է խոցելի խմբերում գտնվող 700 եւ ավելի անձ, այդ թվում՝ տեղահանվածներ Արցախից, սոցիալապես անապահով եւ հաշմանդամություն ունեցող անձինք, 44-օրյա պատերազմի պատճառով զոհված զինծառայողների ընտանիքի անդամներ: Քաղաքապետը մասնավորապես նշել է. «Դիլիջանի համայնքապետարանն իր հերթին այս քաղաքացիներին տրամադրում է ֆինանսական, նյութական աջակցություն: Մենք քաջալերում ենք ցանկացած միջոցառում եւ ծրագիր, որը միտված է խոցելի խմբերի աջակցությանը: Ողջունելի է ուսուցման կենտրոնի գաղափարը եւ դրան կից գործող լվացքատունը, որը, կարծում եմ, իրապես կնպաստի խոցելի խմբերի մասնագիտական ու անձնային հմտությունների բարելավմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանն ու նրանց զբաղվածության ապահովմանը»:

Հայաստանի համայնքների միության կողմից մշակված «Դիլիջանում խոցելի խմբերի ներկայացուցիչներին աջակցելու համար սոցիալական ձեռնարկատիրության եւ մասնագիտական ուսուցման կենտրոնի ստեղծում» ծրագրի գործընկերներն են «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հ/կ-ն, «Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիան», «Միջմշակութային հետազոտությունների, ուսուցման եւ երկխոսության միջազգային կենտրոն» հ/կ-ն, «ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոն»-ը: Դրամաշնորհային ծրագիրն իրականացվել է Ճապոնիայի դեսպանության աջակցությամբ:

Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիայի ներկայացուցիչ Սաթիկ Բաղեյանը, կարեւորելով սոցիալական ձեռնարկատիրության գաղափարը, փաստել է, որ այն հզոր մեխանիզմ է աջակցելու տեղական ինքնակառավարման մարմիններին՝ լուծելու բազում համայնքային խնդիրներ:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի գործադիր տնօրեն Արտակ Սարիբեկյանը, կարեւորելով ծրագիրը, վստահեցրել է, որ, որպես ծրագրի գործընկեր կազմակերպություն, իրենք նույնպես օժանդակություն կցուցաբերեն ծրագրի շարունակականության համար:

Տավուշի մարզպետարանի Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության եւ վերլուծության բաժնի վարիչ Գուրգեն Հարությունյանն էլ փաստել է՝ ծրագիրը համահունչ է Տավուշի մարզի ռազմավարական զարգացման ծրագրին: Նա շնորհակալություն է հայտնել, որ ծրագիրն իրականացվում է հենց Տավուշի մարզում, քանի որ այն դրական ազդեցություն կունենա սոցիալապես խոցելի խմբերի ձեռնարկատիրական զարգացման վրա:

Հայաստանի տուրիզմի ֆեդերացիայի նախագահ Մեխակ Ապրեսյանը փաստել է՝ տուրիզմը մեծ նշանակություն ունի տնտեսական, սոցիալական եւ մշակութային առումով ու շեշտել. «Որպեսզի ունենանք կայուն տուրիզմ, դրա համար անհրաժեշտ են բարձրակարգ կադրեր: Կարծում եմ՝ կենտրոնը նպաստելու է նաեւ տուրիզմի ոլորտը որակյալ կադրերով ապահովելու գործին»:

Ծրագրի փակման պաշտոնական արարողությունից հետո կազմակերպվել է նաեւ այցելություն Դիլիջանում խոցելի խմբերի ներկայացուցիչներին աջակցելու համար սոցիալական ձեռնարկատիրության եւ մասնագիտական ուսուցման նորակառույց կենտրոն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՕՊԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետության պետական նախարար, օպերատիվ շտաբի պետ Ռուբեն Վարդանյանի ղեկավարությամբ երեկ տեղի ունեցած շտաբի նիստում քննարկվել են շրջափակման պայմաններում բնակչության կենսական կարիքների ապահովմանը վերաբերող մի շարք հրատապ հարցեր:

Նիստում ներկայացվել է կտրոնային համակարգի ներդրման գործընթացը: Նշվել է, որ առաջին անհրաժեշտության մի խումբ պարենային ապրանքների վաճառքի կտրոնների տրամադրման տեխնիկական եւ կազմակերպչական աշխատանքներն իրականացվել են՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Երեկվանից Ստեփանակերտի 200 եւ շրջանների 400 խանութներում սկսվել է հինգ ապրանքատեսակների՝ կտրոններով վաճառքը: Անհրաժեշտ պարենային ապրանքները պետական պահուստից մատակարարվել են խանութներին: Ջուգահեռ իրականացվելու է գների եւ ընթացիկ իրավիճակի վերահսկողություն:

Պետնախարարը շնորհակալություն է հայտնել գործընթացի պատասխանատուներին այն սեղմ ժամկետներում սահուն կազմակերպելու համար եւ կարեւորել է հետադարձ կապի պահպանումը ինչպես բնակչության, այնպես էլ մատակարարների եւ առեւտրի կետերի հետ: Նա անհրաժեշտ է համարել առեւտրի կետերին պարենային ապրանքների առավելագույնս համաչափ բաշխումը: Ի պատասխան՝ տեղեկացվել է, որ մինչեւ շրջափակումը մատակարարների կողմից հանրապետությունում սպասարկվում էր 400 խանութ, մնացած խանութները վերավաճառք էին իրականացնում, մինչդեռ այժմ համաչափ բաշխում եւ գների միասնականություն ապահովելու նպատակով մատակարարների կողմից սպասարկվող խանութների թիվն ավելացվել է՝ հասնելով 600-ի:

Նիստի ընթացքում ներկայացվել է նաեւ հանրապետությունում էներգամատակարարման հետ կապված իրավիճակը: Զեկուցվել է, որ այն շարունակում է լարված մնալ: Հովիարային անջատումներով եւ գազամատակարարման բացակայությամբ պայմանավորված՝ համակարգում ավելացել է վթարների թիվը, ինչի հետեւանքով ժամանակ առ ժամանակ նաեւ էներգամատակարարման գրաֆիկների խախտումներ են տեղի ունենում: Պետնախարարը հանձնարարել է առկա պայմաններում իրավիճակի կարգավորմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել:

Նա հանձնարարել է նաեւ ամփոփել բնակչության կենսագործունեության հետագա ապահովման, հումանիտար ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ առաջարկները Անվտանգության խորհրդի քննարկմանը ներկայացնելու համար:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՈՒՐՎԱԿԱՆ

ԻՄ ՍԻՐԱԾ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁԵԼ Է ԳԵՐԵԶՄԱՆ

Հունվարի 19-ին Հայաստանի պաշտպանության նախարարության N զորամասի Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված շինության ներսում վառարանն ավտոբենզինով վառելու ընթացքում հրդեհ էր բռնկվել: Հրդեհի հետեւանքով անձնակազմից 15 պարտադիր ժամկետային զինծառայողներ են մահացել: Նույն զորամասի վեց պարտադիր ժամկետային զինծառայողներ եւ մեկ սպա տարբեր մարմնական վնասվածքներ են ստացել:



Հաղորդավարուհի, դերասանուհի Նազենի Հովհաննիսյանն իր ինստագրամյան էջի Stories բաժնում գրառումներ է կատարել՝ անդրադառնալով բոթերի ու գույժերի անվերջանալի երթին:

«Անտանելի էր էս օրը..., բոթերի անվերջանալի երթը, բայց սարսափելին այն է, որ «այս օրն» արդեն անվերջանալի 5 տարի է, ու հույս չկա, թե ողբերի էս փակ շրջանից էլ երբեւէ դուրս կգանք... մրոտ ու քրքրված մի ժող ջան՝ խաղալիք դարձած կիսագրագետ մի մարիոնետի կողմից, որին թշնամի բոլոր երկրները ոնց ուզում, խաղացնում են, ինքն էլ շնորհակալությամբ խաղում է՝ իրական կյանքեր տալով իր պարտքի դիմաց»:

«Մտքերը գոռում են վրաս: Իմ սիրած լռությունը դարձել է գերեզման ինձ համար... Հայ ժողովուրդը՝ խեղճ ու անդեմ, որ արդեն 4 երկար տարի է ապրում է գերեզմանում, բայց դե երկնքում հրավառություն է, ու իրենց ուտող որդերին ու փտող մարմինն ու փտած հոգիները չեն նկատում: Կարեւորը մարդակեր դեւերը երջանիկ են, պարգեւավճար-բիզնես տեղում ու վերջում էլի.. Թումանյանի քառյակը հիշեցի՝ Աստված պահի քեզ որդի, ո՞նց էր համը իմ ձագի: Անմեղ զոհերի երկիր», - գրել է Նազենի Հովհաննիսյանը: Նշենք, որ ինժեներասակրավորային վաշտի կացարանում ամսի 19-ին բռնկված հրդեհից հետո Պաշտպանության նախարարությունում մի շարք պաշտոնանկություններ են եղել: Աշխատանքից ազատվել են 2-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Վահրամ Ֆրունզի Գրիգորյանը, կորպուսի շտաբի պետ-կորպուսի հրամանատարի տեղակալ, գնդապետ Միհրան Սերգեյի Մախսուդյանը, 2-րդ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ թիկունքի եւ ԿՇՇ գծով, թիկունքի պետ, գնդապետ Շիրազ Գեւորգի Խաչատրյանը, հրամանատարի մարտական հերթապահության գծով տեղակալ, գնդապետ Արթուր Սերժիկի Օհանյանը, ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության հրդեհային անվտանգության ծառայության պետ, գնդապետ Սարգիս Ռոբերտի Մազմանյանը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԽԱՂ ՈՒ ՊԱՐ»

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Երգահան եւ պրոդյուսեր Զառա Պետրոսյանի «Խաղ ու պար» մանկապատանեկան երգերի ժողովածուում ընդգրկվել են 24 երգի նոտագրումներ, բառեր, ինչպես նաեւ դրանց գործիքավորումներ, որոնք հասանելի են QR կոդերի միջոցով:

Գրքի շնորհանդեսը տեղի կունենա հունվարի 21-ին Գեղագիտության ազգային կենտրոնում:

Ժողովածուն պատրաստվել է «երեխաների կողմից, երեխաների համար» սկզբունքով. այն ամբողջությամբ նկարազարդել են Հովհաննես Գասպարյանի, Քրիստինա Ավետիսյանի եւ Մարինա Շահումյանի գեղարվեստական ստուդիաների սաները:

«Երեխաների հետ աշխատանքը, նրանց տաղանդների բացահայտումն ինձ ոչ միայն տալիս է ապրելու ու արարելու կորով, այլեւ նրանց դարձնում է իմ ստեղծագործությունների համահեղինակ. ես ոգեշնչվում եմ հենց մեր հրաշք բալիկների հետ աշխատանքով: Այս գիրքը տարբեր տարիներին գրված ստեղծագործություններիս ընտրանին է: Սրանով ցանկանում եմ երգերն առավել մատչելի դարձնել մեր երկրում բնակվող, երաժշտական ներուժ ու ձիրք ունեցող բոլոր երեխաների համար: Դա է պատճառը, որ նախատեսում ենք այն տարածել հայաստանյան դպրոցներով՝ հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ ժողովածուն երաշխավորված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից՝ որպես ուսումնական նյութ»,- նշում է Զառա Պետրոսյանը:

Դաշնամուրային նվագակցության հեղինակը Լիանա Փիրումյանն է, գրքի ձեւավորումն իրականացրել է Հասմիկ Մովսիսյանը:

Երեւանյան շնորհանդեսը տեղի կունենա Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ: Հաջորդ շնորհանդեսները նախատեսվում են Շիրակի մարզում, Սյունիքում եւ այլ մարզերում: Ժողովածուն լույս է տեսել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կրթական նախաձեռնությունների աջակցության ծրագրերի շրջանակում:

ԼՈՒՐԵՐ

ՈՉ ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Նյու Մեքսիկոյի շրջանի դատախազ Մերի Քարմակ-Ալթվեյսը հայտարարել է, որ որոշել է մեղադրանք առաջադրել դերասան Ալեք Բոլդուինի եւ նկարահանող խմբի զինագործին «Ժանգը» ֆիլմի նկարահանման հրապարակում կին օպերատորի սպանության համար:

««Ժանգը» ֆիլմի դերասան եւ պրոդյուսեր Ալեք Բոլդուինն ու զինագործ Հաննա Գուտերեշ-Ռիդին մեղադրանք կառաջադրվի 2021 թվականին Սանտա Ֆե կոմսությունում նկարահանումների ժամանակ Գալինա Հաթչինսի ոչ կանխամտածված սպանության երկու գործով», - ասվում է Քարմակ-Ալթվեյսի հայտարարության մեջ:

Նա հավելել է, որ մեղադրանքը կներկայացվի մինչեւ ամսվա վերջ, իսկ դատապարտման դեպքում պատիժը կարող է լինել մինչեւ մեկուկես տարվա ազատազրկում եւ 5000 դոլար տուգանք: Հիշեցնենք, որ «Ժանգը» ֆիլմի նկարահանումների ընթացքում զենքը, որը պետք է լիցքավորված լիներ ոչ մարտական փամփուշտներով, կրակել է՝ վիրավորելով օպերատորի եւ ռեժիսորի: Օպերատորը մահացել է, ռեժիսորը ծայրահեղ վիճակում էր:

ԱՆՃԱՆԱՉԵԼԻ ԹԻՄ

Անգլիայի չեմպիոն «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան մեկբանել է 4:2 հաշվով կամային հաղթանակը Լոնդոնի «Տոտենհեմի» նկատմամբ Պրեմիեր լիգայի 7-րդ տուրից տեղափոխված խաղում:

«Մենք հեռու ենք այն թիմից, որն ունեինք նախորդ մրցաշրջաններում: Այսպիսի սխրանքներն ամեն խաղում չեն լինում: Անճանաչելի է դարձել իմ թիմը:

Նախկինում ունեինք կիրք եւ վազելու ցանկություն: Մենք հեռու ենք առաջին տեղի համար մրցակցությանը մասնակից լինելուց: Այս անգամ հաջողությունը ժպտաց մեզ»,- ասել է Գվարդիոլան:

19 խաղից հետո «Մանչեսթեր Սիթին» 42 միավորով երկրորդն է եւ 5 միավոր հետ է առաջատար «Արսենալից», որը մեկ խաղ քիչ է անցկացրել: «Տոտենհեմը» 20 խաղից հետո ունի 33 միավոր եւ 5-րդն է:

«ԲՐԱՅԹՈՆԸ» ՀՐԱԺԱՐՎԵԼ Է

Լոնդոնի «Չելսին» փորձում է ձեռք բերել «Բրայթոնի» 21-ամյա էկվադորցի կիսապաշտպան Մոյսես Կայսեդոյին:

«Չելսին» առաջարկել է 62 միլիոն եվրո, սակայն մերժում է ստացել: «Բրայթոնը» Կայսեդոյի վաճառքը հնարավոր է համարում ամռանը ավելի բարձր գնով:

Անգլիայի ընթացիկ առաջնությունում Կայսեդոն մասնակցել է 17 հանդիպման, խփել է 1 գոլ:

«Բրայթոնը» Պրեմիեր լիգայի նախորդ խաղում 3:0 հաշվով հաղթել էր «Լիվերպուլին» եւ 30 միավորով 7-րդ տեղում է: «Չելսին» 10-րդն է՝ 28 միավոր:

● *Հունվարի 22-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Չարլին եւ շոկոլադի գործարանը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 15:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Փոփոխություններից հետո դեղատունը չի վաճառում դեղեր առանց դեղատոմսի, իսկ բժիշկս արձակուրդում է. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Սուսաննա Պողոսյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկ է ընդգծել, որ տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2018 թվականի մարտի 1-ից դեղատոմսով բաց են թողնվում հակավարակային դեղերը, հուլիսի 1-ից՝ ներարկման համար նախատեսված դեղերը, իսկ հոկտեմբերի 1-ից՝ դեղատոմսով բաց թողնվող մնացած բոլոր դեղերը:

Դեղատոմսով դեղեր վաճառելու իմաստն այն է, որ բժիշկը, դեղատոմս գրելով, ապահովում է պացիենտին նշանակված դեղերի ճշգրիտ եւ կանոնակարգված օգտագործումը, պացիենտի հետ հետեւողական եւ շարունակական աշխատանքը, բուժման ընթացքի հսկողությունը, ինչը հանդիսանում է բուժման արդյունավետության բարձրացման կարեւոր գրավական:

Եթե դեղատունը առանց դեղատոմսի մերժել է վաճառել դեղը, որի պատճառով դեղատոմսը դարձել է շտապ անհրաժեշտ դեղը ձեռք բերելու համար, իսկ բուժող բժիշկը բացակայում է, ապա նման դեպքում Դուք կարող եք դեղատոմս ստանալու համար դիմել Ձեր պոլիկլինիկա՝ փոխարինող բժշկին, կամ դիմել ցանկացած բժշկական հաստատություն, ստանալ բժշկական խորհրդատվություն, որից հետո բժիշկը կարող է նշանակել դեղատոմս: Ընդ որում՝ Դուք կարող եք դիմել ինչպես այլ բուժհաստատությունում աշխատող անծանոթ, այնպես էլ Ձեզ համար ծանոթ բժիշկների, քանի որ դեղատոմս գրելու իրավունք ունեն բոլոր բուժող բժիշկները: Պետք է նկատի ունենալ, որ շտապօգնության բժիշկները չեն կարող եւ իրավունք չունեն կանչի ժամանակ դեղատոմս դուրս գրել քաղաքացու համար:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարկ է հիշել եւ նկատի ունենալ, որ պացիենտը դեղատոմսն իր պոլիկլինիկայից ստանում է անվճար, իսկ այլ բժշկական հաստատություն դիմելու դեպքում պետք է վճարի միայն բժշկական խորհրդատվության համար, իսկ առանձին դեղատոմսերի համար չպետք է վճարի: Դեղատոմս դուրս գրելուց բժիշկը իրավունք չունի ուղղորդել կամ պարտադրել պացիենտին դեղը գնել իր ասած դեղատնից կամ գնել հենց իր կողմից մատնանշված ապրանքանիշի դեղը: Դեղատունը եւ դեղի ապրանքանիշը ընտրելը պացիենտի իրավունքն է: Ավելին՝ կարող եք դեղը գնել Հայաստանի տարածքում գտնվող ցանկացած դեղատնից, առանց որեւէ տարածքային սահմանափակման: Դեղատոմսը դուրս գրելուց հետո դրանով որոշ տեսակի դեղերի համար դեղատոմսի գործողության ժամկետը 6 ամիս է, իսկ որոշների դեպքում՝ 10 օր, որի մասին նշում է առկա լինելու դեղատոմսի վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Գրավատունը վաճառել է ոսկյա իրերս չմուծված պարտքի եւ տույժերի համար ու էլի գումար է պահանջում. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Նաիրա Յավրյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախ հարկ է ուսումնասիրել Ձեր եւ գրավատան միջեւ կնքված գրավի պայմանագիրը, որով կարգավորված են բոլոր հարցերը: Պայմանագիրը ուսումնասիրելուց հետո անհրաժեշտ է քննարկել, թե որքանով են գրավատան այդ պահանջները եւ ցուցաբերած վարքագիծը համապատասխանում պայմանագրին եւ գործող օրենսդրությանը: Պետք է պարզել նաեւ, թե ինչ գումարով են վաճառել ոսկյա իրերը, եւ երբ են դրանք վաճառվել: Հաճախ գրավատները ոսկյա իրերը վաճառում են գրավադրված ոսկյա իրերի գնահատված արժեքից ավելից ցածր գումարով, որն էլ առաջ է բերում պարտքի ոչ ամբողջական մարում: Որոշ դեպքերում էլ գրավատունը սպասում է, որ կուտակվեն որոշակի չափով տույժեր ու տուգանքներ, ու հետո նոր իրացնում է ոսկյա իրերը: Եթե ոսկյա իրերը վաճառվել են ոչ այն արժեքով, որը նախապես գնահատվել է գրավ դնելիս, իսկ ոսկյա իրերը վաճառելիս էլ Ձեզ նախօրոք չի ծանուցել, չի հայտնել, որ Ձեր ոսկյա իրերը վաճառքի է հանում, եթե գրավատունը Ձեր՝ պարտավորությունները չկատարելու պահից հետո ողջամիտ ժամկետում չի վաճառել ոսկյա իրերը, ապա նման իրավիճակում առկա է գրավատան կողմից պայմանագրի եւ ՀՀ օրենսդրության պահանջների խախտում: Նման իրավիճակում կարող եք Ձեր այդ ֆինանսական խնդիրները գրավատան հետ լուծելու նպատակով դիմել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ՝ ներկայացնելով Ձեր խնդիրը գրավատան հետ, եւ խնդրել նրանց միջամտությունը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Իսկ եթե գրավատունն արդեն իսկ դիմել է դատարան, ապա պետք է Ձեր այդ առարկությունները գրավոր եւ բանավոր կերպով ներկայացնեք դատարան՝ հայտնելով, որ գրավատունը դրսեւորել է անբարեխիղճ վարքագիծ՝ դիմումում նկարագրելով եւ շարադրելով Ձեր փաստարկները: Դատարանը քննության կառնի Ձեր առարկությունները եւ կորոշի, թե որքանով է հիմնավոր գրավատան պահանջը Ձեր հանդեպ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ մեծանուն բանաստեղծ Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 104-րդ տարեդարձն էր:

Սիլվա Կապուտիկյանը ծնվել է 1919 թվականի հունվարի 20-ին Երեւանում՝ Վանից գաղթած ընտանիքում: Սովորել է Երեւանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում: 13 տարեկանում գրել է իր առաջին բանաստեղծությունը՝ «Պատասխան՝ Թումանյանին»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.01.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: